ԱԿԱՆԱՎՈՐ ՀՆԱԳԵՏԸ ԵՎ ԱՐԵՎԵԼԱԳԵՏԸ

(Բ. Բ. Պիոտրովսկու ծննդյան 80 ամյակի առթիվ)

Բուռեց ականավոր հնագետ և արևելագետ, սոցիալիստական աշխատանքի հերոս, ՍՍՀՄ ակադեմիայի թղթակից անդամ, ՍՍՀՄ և ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, Ռուսաստանյան ֆեդերացիայի արվեստի և ՀՍՍՀ սիրելի վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բորիս Բորիսովիչ Պիոտրովսկու ծննդյան 80 և գիտամանկավարժական գործունեության 60-ամյակը:

Անհնարին է փոքրածավալ հոդվածի սահմաններում բուն ամենայնի ներկայացնել բազմավաստակ հնագետի և արևելագետի երկար ու ձիգ տարիների գիտամանկավարժական, գիտավարչական և հասարակական անդուլ գործունեության ամբողջական բնութագիրը: Ուստի սահմանված հնի սոսկ առանձին բնորոշ դրվագներով արվագծելու այն, ինչ արտակարգ մեծ վարպետությամբ, նուրբ նաշակով և խորագնին գիտնականի հմտությամբ Բ. Պիոտրովսկին մատուցել է սովետական հնագիտությանը և արևելագիտությանը:

Լենինգրադը՝ սովետական արևելագիտական մտքի այդ անգուգական տրուանը, դարձավ տակավին երիտասարդ Բ. Պիոտրովսկու գիտական հետաքրքրությունների ձևավորման իսկական դրոշմը: Դեռևս վաղ հասակից, 1920-ական թվականներին, նա հրապուրվել է եգիպտական հիերոգլիֆներով և աշակերտելով ականավոր արևելագետներ Ն. Մառին, Հ. Օրբելուն, Վ. Սարավեին, Ի. Մեշչանինովին, Ն. Ֆլիտներին և Ա. Միլլերին՝ համակողմանի գիտելիքներ է ձեռք բերել հին արևելքի մշակույթն և սեպագիր լեզուների մասին: Այնուհետև, Բ. Պիոտրովսկին հնագիտական լուրջ պատրաստություն է ձեռք բերում Հյուսիս-կովկասյան, Թամանյան և մի շարք այլ մշակութաբանական արշավախմբերում:

1930-ական թվականներին նոր էջ է բացվում Բ. Պիոտրովսկու հնագիտական գործունեության մեջ: Նա մոտիկից ծանոթանում է Հայաստանի հնություններին, հրապուրվում հնագույն դամբարանադաշտերի, բնակավայրերի. կիկլոպյան և ուրարտական ամրոցների ուսումնասիրությամբ, աշխատակցում ակադեմիկոս Հ. Օրբելու գլխավորած Ամբերդի արշավախմբին, պեղումներ ձեռնարկում Սևանի ափին՝ Սովինարի ուրարտական ամրոցում, վերծանում և ուսումնասիրում Ռուսա I թագավորի ժայռագիր ծավալուն արձանագրությունը:

Իրավամբ «Հայաստանը թանգարան է բաց երկնքի տակ». և որքան ավելի խորն է ուսումնասիրում Հայաստան-թանգարանը ստեղն կազմավորված հնագետն այնքան ավելի նվիրական զգացումներ է տածում Հայաստանի բազմադարյան մշակույթի, հայ ժողովրդի խորախորհուրդ անցյալի նկատմամբ, սիրում Հայաստանը: Այսպես է սկսվում հայ ժողովրդի և Բ. Պիոտրովսկու տասնամյակներ ճարտնող բարեկամությունը:

Ըստ ամենայնի լայն են ակադեմիկոս Բ. Պիոտրովսկու գիտական հետաքրքրությունների շրջանակները՝ սկսած պալեոլիթից մինչև հայ ժողովրդի պատմությունը: Սակայն դրանց մեջ ուրույն տեղ են գրավում Ուրարտուի մշակույթի և պատմության հարցերը: Եվ պատահական չէր որ նրա թեկնածուական դիսերտացիայի թեմա դարձավ հենց Օուրարտուի պատմությունը, որը հրատարակվեց առանձին գրքով և պաշտպանվեց 1939 թ.: Այդ նույն թվականին էլ սկսվեցին Կարմիր-բլուրի՝ Թեյշեբաինի քաղաք-ամրոցի (մ. թ. ա. VII—VI դդ.) պեղումները Հայաստանի պատմական թանգարանի, հնությունների պահպանության կոմիտեի և Լենինգրադի պետական

էրմիտաժի, իսկ հետագայում՝ ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ու էրմիտաժի միացյալ ուժերով: Կարճ ժամանակից հետո Բ. Պիոտրովսկին դարձավ հնագիտական այդ արշավախմբի մշտական, հմուտ ղեկավարը:

Սակայն շուտով վրա հասավ Հայրենական մեծ պատերազմը և Կարմիր-բլուրի պեղումներն ընդհատվեցին: Բ. Պիոտրովսկին մեկնեց Լենինգրադ՝ անձամբ մասնակցելու հայրենի քաղաքի պաշտպանության սրբազան գործին: Բ. Պիոտրովսկին նշանակվեց պետական էրմիտաժի հրշեջ խմբի պետի տեղակալ: Կիսաքաղց և վատառողջ գիտնականը մի կողմից պաշտպանում էր պաշարված Լենինգրադի մշակութային անհուն գանձերը, մյուս կողմից, ժամանակ առ ժամանակ, շնչի ծեղնահարկում շարադրում «Ուրարտուի պատմությունը և մշակույթը» մոնումենտալ աշխատությունը: Ինչ որքան ծանր պայմաններում է գրվել այդ մենագրությունը, երևում է գրքի առաջաբանում հեղինակի արած խոստովանությունից: «Պաշարման պայմանները,—գրել է նա,—ինձ գրկել են շարադրանքի պրոցեսում գրադարաններից օգտվելու հնարավորությունից, և դրանով պետք է բացատրել գրքի ապարատի որոշ թերություններ՝ ծանոթագրություններում բերված գրքերի վերնագրերի ոչպատշաճ լինելը կամ էջերի հշգրիտ նշումների բացակայությունը: Գրքի աշխատանքի համար անհրաժեշտ շատ բաներ այդ ժամանակ մատչելի չէին, ստիպված եմ եղել օգտվելու սոսկ իմ կոնսպեկտներից»: Ի դեպ գրքի հենց առաջին էջի վրա ասկա է հետևյալ բնաբանը. «Լենինգրադի պաշտպանության ժամանակ զոհված իմ ընկերների՝ երիտասարդ գիտնականների պայծառ հիշատակին եմ նվիրում այս գիրքը»:

Այսպիսի ծանր պայմաններում ստեղծված «Ուրարտուի պատմությունը և մշակույթը» գիրքը հիացմունքով ընդունվեց գիտական աշխարհում: Հենց պատերազմի ժամանակ էլ՝ 1944 թ., այն հրատարակվեց Երևանում, հաջողությամբ պաշտպանվեց իբրև դոկտորական դիսերտացիա և ապա արժանացավ կառավարական բարձրագույն պարգևի՝ ՍՍՀՄ պետական մրցանակի: Աչքի բնկնող գիտական ծառայությունների համար Բ. Պիոտրովսկին ընտրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, արժանացավ Ռուսաստանյան Ֆեդերացիայի տրվեստի և ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործչի բարձր կոչումների:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին ականավոր հնագետ-լեզուաբանն ընդունվեց ՍՄԿԿ շարքերը:

«Ուրարտուի պատմությունը և մշակույթը» գրքով Բ. Պիոտրովսկու համբավը տարածվեց աշխարհով մեկ և նա դասվեց ուրարտագիտության աշխարհահռչակ մասնագետների շարքը: Հետագայում Հռոմում այդ մենագրությունը լույս տեսավ իտալերեն, իսկ 1959 թ. Մոսկվայում ունեցավ իր երկրորդ, կատարյալ հրատարակությունը՝ «Վանի թագավորությունը» խորագրով: Հիշյալ գիրքն ամենուրեք, թե՛ Սովետական Միությունում, թե՛ արտասահմանում ուրարտագետների և ընդհանրապես Հին արևելքի պատմության մասնագետների համար վաղուց ի վեր դարձել է սեղանի գիրք:

Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո Կարմիր-բլուրի պեղումները վերսկսվեցին. Բ. Պիոտրովսկին շարունակեց ղեկավարել այդ հոյակապ հուշարձանը և ուսումնասիրել ու գիտական աշխարհին մատուցել նրա բազմազան ու բազմաճառուտ գանձերը: Երևանի հարավ-արևմտյան ծայրամասում, երբեմնի Իլդարուհիա (Հրազդան) գետի ձախ ափին բազմած այդ աննշան բլուրը տեսանելի դարձավ հողագնդի բոլոր հեռավոր անկյուններից: Անդուլ և համառ պեղումների ընթացքում սեղեցին և հնագիտական լուրջ դպրոց անցան Մոսկվայի, Լենինգրադի, Թբիլիսիի, Բաքվի և հատկապես Երևանի գիտահետազոտական հիմնարկների ու բուհերի բազմաթիվ մասնագետներ, որոնցից շատերն արդեն անվանի գիտնականներ են: Նրանք իրենց վաստակաշատ ուսուցչի հետ ձեռ-ձեռքի տված այժմ հմտորեն բովանդակավորում են Հայաստանի և ընդհանրապես Անդրկովկասի բազմադարյան քաղաքակրթության ու մշակույթի պատմության չլրացված էջերը:

Այժմ, երբ Կարմիր-բլուրի պեղումները վաղուց հասել են իրենց ավարտին՝ առեղծվածները դարձնելով գիտականորեն բացատրելի իրողություններ, Բ. Պիոտրովսկին և Կարմիր-բլուրն այնքան են մերվել միմյանց, որ «Կարմիր-բլուր» ասելով անմիջապես հիշում ենք Բ. Պիոտրովսկուն և, ընդհակառակը:

Նշված պեղումներին զուգընթաց, Բ. Պիոտրովսկին ղեկավարել է Եգիպտոս գործուղված սովետական հնագիտական արշավախումբը, որը մեծ աշխատանքներ կատարեց Ասուանի շրամբարտակի կառուցման կապակցությամբ Նուբիայում շրի ստակ անցնող հսկայական տարածքի հնագիտական ուսումնասիրության ուղղությամբ: Այստեղ սովետական արշավախումբը հայտնաբերեց բազմաթիվ նոր, գիտության համար առաջնակարգ նշանակություն ունեցող արձանագրու-

թյուններ: Տարիներ ի վեր Բ. Պիոտրովսկին հանդիսացել է նաև Արինբերդի (ուրարտական էրեբունիի) հնագիտական արշավախմբի գիտական խորհրդատուն:

Բ. Պիոտրովսկու «Ուրարտուի պատմությունը և մշակույթը» գրքին հաջորդեցին «Անդրկովկասի հնագիտությունը», «Հայ ժողովրդի ծագումը», «Կարմիր-բլուրի» երեք պրակները, «Ուրարտուի արվեստը», արտասահմանում՝ Շվեյցարիայում, Ֆրանսիայում, Արևմտյան Գերմանիայում, օտար լեզուներով հրատարակված «Ուրարտուն» և այլ մենագրություններ, հետազոտություններ ու գիտական հաշվետվություններ, որոնցով գինվել և դաստիարակվել է հետազոտողների մի ամբողջ սերունդ: Միաժամանակ նա ակտիվ մասնակցություն է ունեցել և ունենում հայ ժողովրդի բազմահատոր պատմության հայերեն և ռուսերեն ակադեմիական հրատարակությունների ստեղծմանը:

Մեծ են ակադեմիկոս Բ. Պիոտրովսկու ծառայությունները նաև գիտամանկավարժական աշխատանքի բնագավառում: Տասնյակ տարիներ նա վարում է Անդրկովկասի հնագիտության և Ուրարտուի պատմության կուրսը Լենինգրադի պետական համալսարանում, ղեկավարում այդ բուհի արևելյան ֆակուլտետի Հին արևելքի պատմության ամբիոնի աշխատանքները:

Հսկայական են Բ. Պիոտրովսկու ծառայությունները գիտակազմակերպչական աշխատանքի բնագավառում: Երկար ժամանակ նա վարել է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի հնագիտության և վիմագրության սեկտորի վարիչի, Լենինգրադի պետական էրմիտաժի դիրեկտորի գիտական գծով տեղակալի, ՍՍՀՄ ԳԱ հնագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի դիրեկտորի, ՍՍՀՄ ԳԱ պատմության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնները: Այժմ, տարիներ ի վեր, նա Սովետական Միության աշխարհահռչակ թանգարանի՝ Լենինգրադի պետական էրմիտաժի դիրեկտորն է, ՍՍՀՄ ԳԱ նախագահության անդամ:

Համամիութենական գիտական նստաշրջանների, միջազգային գիտաժողովների ու կոնգրեսների ժամանակ ակադեմիկոս Բ. Պիոտրովսկու զեկուցումները, որոնք հագեցած են արդի գիտության նորագույն փաստերով և ընդհանրացումներով:

Գիտությանը և հայրենիքին մատուցած աշխի ընկնող ծառայությունների համար ակադեմիկոս Բ. Պիոտրովսկին արժանացել է սոցիալիստական աշխատանքի հերոսի պատվավոր կոչման, պարգևատրվել Մարտական, Աշխատանքային կարմիր դրոշի և Հոկտեմբերյան հեղափոխության շքանշաններով, բազմաթիվ պատվոնշաններով ու մեդալներով: 1968 թ. նա ընտրվել է ՀՍՍՀ ԳԱ, իսկական անդամ, իսկ 1970 թ.՝ ՍՍՀՄ ԳԱ ակադեմիկոս:

Պատվարժան հոբելյարը, գիտավարչական ու գիտամանկավարժական աշխատանքներին զուգընթաց, արդեն լույս է ընծայել Եգիպտոսի արշավախմբի գործունեության արդյունքները: Նա հրատարակության է պատրաստում Կարմիր-բլուրի բազմամյա պեղումների ընթացքում հայտնաբերված հնագիտական ու արձանագրական բազմազան հարուստ նյութերն արժեքավորող իր աշխատությունը:

Մեզ՝ ակադեմիկոս Պիոտրովսկու երախտապարտ աշակերտներիս և գործընկերներիս, Հայաստանի ողջ գիտական հասարակայնությանը այսօր պատեհ ասիք է ներկայացել ջերմագին ողջունելու մեր բազմավաստակ, սիրելի ուսուցչին, ականավոր գիտնականին ու նմայիչ մարդուն. ցանկանանք նրան քաջառողջություն և երկարամյա ստեղծագործական անսպառ եռանդ՝ ի բարօրություն մեր հայրենական հնագիտության և արևելագիտության:

ՆԻԿՈԼԱՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր